



ՀՀ ՎԱՅՈՑ ՃՈՐԻ ՄԱՐԶ  
<< ԱՐՏԱՔՐՈՒՅՆՔԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

Մրցույթի հայտարարություն

<<Վայոց ձորի մարզի Արտաքույնքի միջնակարգ դպրոց Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն >> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ կետերի համաձայն՝ Արտաքույնքի միջնակարգ, Եղեգիսի միջնակարգ, Հորբատեղի հիմնական դպրոցների միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն.

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Վայոց ձորի մարզի Արտաքույնքի միջնակարգ դպրոցում 2021թվականի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 18:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային, տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թվականի նոյեմբերի 1-ին՝ ժամը 14:00-ին, Վայոց ձորի մարզի Արտաքույնքի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Վայոց ձորի մարզ, գ. Արտաքույնք, կենտրոնական՝ 7:

Տեղեկությունների համար դիմել՝  
էլ.հասցե [dianabashiyanc@79mail.ru](mailto:dianabashiyanc@79mail.ru),  
հեռախոս +37491171847: